ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 153 – Ա

05 մարտի 2019 թ.

«ԾՈՎԱՍԱՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներովև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 6-րդ և 7-րդ կետերը

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի մարտի 6-ին, ժամը 10^{30}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Զոհրաբյան Արմեն (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ), Շահբազյան Հասմիկ (մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ), Սարգսյան Նելսոն (մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ), Գալոյան Մամիկոն (մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ), Գյարգոյան Մարինե (մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ), Ղուրշուդյան Մարատ (մարզպետարանի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ), Խաչատրյան Արամ (մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ):

2. Մրցութային հանձնաժողովի նախագահ նշանակել Արամ Խաչատրյանին, քարտուղար՝ Հասմիկ Շահբազյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ